

Չատիկի օրը Գամիշլիի Հայ Արաքելական Եկեղեցիի Քահանան իր Չատիկի վերջին պատարագէն ետք յայտարարած է այս պատարագը կ'ըլլայ իր վերջինը

Կիրակի 27 Մարտ 2016 Չատիկի օրը Գամիշլիի Հայ Արաքելական Եկեղեցիի Քահանան իր Չատիկի վերջին պատարագէն ետք յայտարարած է այս պատարագը կ'ըլլայ իր վերջինը, քանի նամակ մը ստացած է Բերիոյ Թեմի ներկայացուցիչներէ / Հալէպ / հեռանալու իր քահանայական աշխատանքէն:

ՀԱՐՑԸ ԵՒ ՀԱՐՑՈՒՄԸ:

Ինչն է ազդած եւ ինչն է պատճառը, Բերիոյ Թեմը պահանջէ, որ քահանան լզէ իր պաշտօնը:

Այս հարցի պատճառը եւ պատասխանատուները վեց-եօթը հոգիներ խմբակ մըն է, տեղի ՀՅԴ-յի անդամներէն, որոնց քահանան հանդիմանած էր իրենց սխալ գործունէութեան ի վնաս շրջանի Հայութեան ապահովութեան:

Այս խմբակի մենատիրական ախորժակները եւ աշխատանքի ոճը թոյլ կ'ուտան շրջանի անապահովութեան եւ մանաւանդ Հայութեան անապահովութեան:

Քահանայի աշխատանքի ոճը չի համապատասխանելով այս խմբակի մենատիրական ախորժակներուն, եկեղեցական, հասարակական, եւ կուսակցական հարցերը իրար խառնելով, ներքին խողովակով ճնշելով Բերիոյ Թեմի վրայ, որ փոխէ քահանան:

Բերիոյ Թեմը պէտք է լաւ տեղեկացուած ըլլայ Գամիշլիի շրջանի այս օրերու իրաւիճակին:

Բայց այս սխալ որոշումը առնելով որը կրնայ իր բասական հետեւանքները ունենալ գամիշլիի եւ ընդհանրապէս շրջանի անապահովութեան:

Վստահ որ երբեք չենք ուզեր եկեղեցական ներքին հարցերուն խարնուիլ, բայց այս հարցը եկեղեցականէն անցած է հաւաքականին, միեւնոյն ժամանակ շրջանի անապահով կացութիւնը, կ'ըսենք ժամանակը չէ քահանայի փոփոխութիւնը ընելու, ժամանակը չէ շրջանի ապահովութեան հետ խաղալու, գիտակից եղէք, պատասխանատուութիւնէ չէք կրնար փախչիլ:

Իսկապէս համայնքը համաձայն չէ, ներքին հարցերը պէտք չէ ազդէ համայնքի անդորութեան փոխանակ միայն կուսակցականներուն մտիկ ընելու, համայնքի ոչ կուսակցականներուն ալ միտքերով լուսաբանուէք, քանի համայնքը կը ցանկանայ պահել քահանային եւ դիմակալել այս փոքրիկ խմբակին:

Յիշեցնենք, կայ նաեւ տեղի Հայկական Անվտանգութեան Ուժերը, որոնց պարտականութիւնն է պաշտպանել շրջանի ազգաբնակչութիւնը եւ մանաւանդ հայկական համայնքը:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը, Համեմատաբար լաւ հիմնաւորուած է շրջանի մէջ, եւ կը յիշեցնէ Արեւմտեան Հայաստանի Նախագահի հրամանագիրը, շրջանը պատերազմի մէջ ըլլալով եւ համայնքը ժողովուրդը իրաւունք ունին խստիւ պաշտպանուելու մինչեւ այն վիճակը որ շրջանի ապահովութիւնը չէ երաշխաւորուած կառավարական ուժերու կողմէ:

Ռումբերը եւ անձնապանական գործողութիւնները բաւարար չէին, ահաւասիկ հիմայ մեր անվտանգութեան ուժերը պէտք է ուշքի բեռնէ ներքին քմահանոյքասէր անհատներն ալ, ԿՈՉ

կ'ընենք Բերիոյ Թեմի, ՀՅԴ հալէպի կեդրոնական կոմիտէութեան, որ պէտք է հաշուի առնեն այս իրավիճակը եւ կանխեն սխալ ընթացքը շրջանի իր կուսակիցներուն:

Մեր գործը եւ խնդիրն է պաշտպանել մեր հայրենակիցները որոնք նախնաորեցին մնալ իրենց շրջանը անտեսելով վտանգն եւ մահը, առհասարակ բոլոր դժուարութիւնները:

Այս վիճակի մէջ առաջնակարգը համերաշխութիւնն պէտք է ըլլայ:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի Ապահովութեան Մշտական Հարցերու Ներկայացուցիչ Հարմանտայեան Արմենակ 02 ԱՊՐԻԼ 2016